



Ա Մ Ա Ն Ո Ր Ի Ն

Ասեն կար ուր նոր Տարին
Ունէր խոստումը ոսկի
Մեզ սանելու անվէպ
Մեր երազի կասարին:

Ամէն տարի կու գայ ան,
Նուէրներու պարկն ուսին,
Պահ մը կ'որդէ սիրքը մեր
Խոստումներով փուն ու սին:

Կու գայ նորէն ու շուար
Կ'ուզողէ նայուածքը չորս դին.
Այֆերուն մէջ կը կարդաս
Կեանքի յանգած մեղեդին:

Ձեռքին ունի մեծ աւել,
Չոր երբ հայեացքդ էր եռուն,
Կեանքիդ զարուն օրերուն
Ձէիր կրնար դուն տեսնել:

Այսօր քիչ քիչ կոթն անոր
Կու գայ քուսիլ փեշերուդ,
Ու մոմունջն է իր անգութ.
— Գնա՛, տեղ տուր մարդուն նոր:

1989

Գ. ՀԱՐՏԱՐ

Ա Ն Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

Ժամանակը անկարեկիր
Կը նսրոզէ ինքզինք սեւա,
Մեր սէրերը, յոյզն ու երազ
Իրենց տեսում, լուռ վախճանին
Կը դիմեն շեւ ու անվէպ:

Ձայներ վհաս, չարագուշակ,
Կեանքի հեւոտ, տաք տոփին
Կ'արձագանգեն եղբարդին.
Փունջը մեր խառն ապրումներուն,
Աւան հիւանդ համբոյրն ըմպած
Ինչպէս տեսնու մը սրսփուն,
Կ'իյնայ յանկարծ մահուան շուրթին:

Ի՞նչ կ'արժեն յոյզ, ապրում, երազ,
Երբ յուսազուրկ ու անմուրազ
Կ'ընենք մեր չուն դէպի անհուն:
Երբ ժամանակն արագասոյր
Սէրերուն վրայ մեր վարդազոյն
Կը թափէ իր մաղան ու թրուն:

1989

Գ. ՀԱՐՏԱՐ

